ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՄԱԱՊՁԲ-9/1-1

ք. Երևան 27.05.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե **ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են մեկ օրից ավելի,**

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են մեկ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5 151 520 (հինգ միլիոն մեկ հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր քսան)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է **15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:**

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **18** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել գործընթացին չհակասող դրույթներ:

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-9/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի											
հրավերով նախատես-ված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/հհ դրամ	ընդհանուր գինը/հհ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	33691162/79	Գլյուկոզիդացված հեմոգլոբին թեստ, *HbA1c TQ Gen.3, 150Tests,cobas c501/INT*	Roche Diagnostics, Գերմանիա	150 թեստ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	հատ	91950	183900	2	հհ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	2	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
2	33691420/363	Կալիբրատոր C.f.a.s., (12 x 3 ml), *Cfas 12x3ML*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 12 x 3 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	34600	103800	3	հհ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
3	33691420/364	Տրիյոդթիրոնին FT3 200 թեստ, *FT3 Elecsys G3 cobas e 200*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 200 թեստ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000	լրակազմ	55200	165600	3	հհ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը

				անալիզատորի շահագործումը ապահովելու համար:							
4	33691420/365	Թիրոքսին FT4 ազատ 200 թեսթ, *FT4 G3 Elecsys cobas e 200*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 200 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	55200	165600	3	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
5	33691420/366	Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեսթ, *TSH Elecsys cobas e 200*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 200 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	55200	276000	5	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	5	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
6	33691420/367	ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեսթ, *HIV combi PT Elecsys cobas e 100*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	130900	392700	3	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
7	33691420/368	Հեպատիտ C Anti-HCV, *Anti-HCV G2 Elecsys cobas e 100*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով	լրակազմ	190500	381000	2	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	2	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը

				տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:							
8	33691420/369	Հեպատիտ B HBsAg 100 թեսթ, *HBsAg G2 Elecsys cobas e 100*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	63500	317500	5	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	5	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
9	33691162/80	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ, *CRP LX, 300Tests, cobas c, Integra*	Roche Diagnostics, Գերմանիա	300 թեսթ պարունակող կասսետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	հատ	145750	291500	2	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	2	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
10	33691420/380	Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ, *BIL-T Gen.3, 400Tests cobas c 111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	33200	66400	2	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	2	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
11	33691420/381	Միզանյութ 400 թեսթ, *UREA 400T*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի	լրակազմ	21450	42900	2	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի,	2	2019թ. մայիս, բայց ոչ

		cobas c 111		համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ					Կենտրոնական դեղաբազա		ուշ, քան 29-ը
12	33691420/382	Տրանսամին ազա ԱՍՏ 400 թեսթ, *AST/GOT 400T cobas c 111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	20900	62700	3	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
13	33691420/396	Տրանսամին ազա ԱԼՏ 400 թեսթ, *ALT 400T cobas c 111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝4 x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	20350	61050	3	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
14	33691420/397	Ալֆա-Ամիլազա 200 թեսթ, *α-Amylase 200T cobas c 111*	Roche Diagnostics, Գերմանիա	լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝2 x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8 ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	50050	200200	4	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	4	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
15	33691420/398	Հիմնային	Roche Diagnostics,	Լրակազմում 200 թեսթ	լրակազմ	15530	62120	4	ՀՀ Ք.Աբովյան,	4	2019թ.

		ֆոսֆատազա 200 թեսթ, *ALP IFCC Gen.2, 200T, cobas c111*	Գերմանիա	նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝2 x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ					Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա		մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
16	33691420/388	Խոլեսթերոլ 400 թեսթ, *Cholesterin 400T cobas c 111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեստ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	29700	118800	4	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	4	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
17	33691420/389	Գլյուկոզիդացված հեմոգլոբին 200 թեսթ, *HbA1c TQ Gen.3, 200Tests,cobas c111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	135400	541600	4	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	4	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
18	33691420/390	C -Ռեակտիվ սպիտակուց 200 թեսթ, *CRP LX 200T cobas c 111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 1x200 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	99000	396000	4	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	4	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը

19	33691420/391	Cleaner, basic 4 x 21 ml (NAOH-D) cobas c111 համար, *Cleaner Basisch cobas c111*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 4x21 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար: Ֆորմատ՝ 4x21, 15-25C ջերմային ռեժիմ ,գործարանային փաթեթավորումով տուփ	լրակազմ	23650	70950	3	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	3	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
20	33691420/392	Տրիյոդթիրոն ին T3 200 թեսթ, *T3 Elecsys cobas e 200*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 200 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	59840	59840	1	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	1	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
21	33691420/395	Թիրոքսին T4 200թեսթ, *T4 Elecsys cobas e 200 V2*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 200 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	լրակազմ	59840	59840	1	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	1	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
22	33691162/81	Combur- 10 UX կամ համարժեք Թեսթ, *Combur-10-UX 100 Str.*	Roche Diagnostics, Գերմանիա	Combur- 10 UX Urisys սարքի համար, ֆորմատ՝ 100 սթրիպ տուփում, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	հատ	200	1000000	5,000	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա	5,000	2019թ. մայիս, բայց ոչ ուշ, քան 29-ը
23	33691420/393	Հեպատիտ B HBeAg 100 թեսթ, *HBeAg*	Roche Diagnostics, Գերմանիա	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,	լրակազմ	131520	131520	1	ՀՀ Ք.Աբովյան, Արզնու խճուղի,	1	2019թ. մայիս, բայց ոչ

		Elecsys cobas e 100		գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:					Կենտրոնական դեղաբազա		ուշ, քան 29-ը

Ծանոթություն.

Ապրանքները պետք է ունենան.

1.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):

2.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

3.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

****թիվ 1,2 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

/ Տնօրեն՝

Ա. ԱՂԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-9/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10-ը	Ընդամենը
1	33691162/79	Գլյուկոզիդացված հեմոգլոբին թեսթ	183900	183900	183900	183900	183900	183900	183900	183900	183900
2	33691420/363	Կալիբրատոր C.f.a.s., (12 x 3 ml)	103800	103800	103800	103800	103800	103800	103800	103800	103800
3	33691420/364	Տրիյոդթիրոնին FT3 200 թեսթ	165600	165600	165600	165600	165600	165600	165600	165600	165600
4	33691420/365	Թիրոքսին FT4 ազատ 200 թեսթ	165600	165600	165600	165600	165600	165600	165600	165600	165600
5	33691420/366	Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեսթ	276000	276000	276000	276000	276000	276000	276000	276000	276000
6	33691420/367	ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեսթ	392700	392700	392700	392700	392700	392700	392700	392700	392700
7	33691420/368	Հեպատիտ C Anti-HCV	381000	381000	381000	381000	381000	381000	381000	381000	381000
8	33691420/369	Հեպատիտ B HBsAg 100 թեսթ	317500	317500	317500	317500	317500	317500	317500	317500	317500
9	33691162/80	C -Ռեակտիվ սպիտակուց թեսթ	291500	291500	291500	291500	291500	291500	291500	291500	291500
10	33691420/380	Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ	66400	66400	66400	66400	66400	66400	66400	66400	66400
11	33691420/381	Միզանյութ 400 թեսթ	42900	42900	42900	42900	42900	42900	42900	42900	42900
12	33691420/382	Տրանսամինազա AUS 400 թեսթ	62700	62700	62700	62700	62700	62700	62700	62700	62700
13	33691420/396	Տրանսամինազա ALS 400 թեսթ	61050	61050	61050	61050	61050	61050	61050	61050	61050

14	33691420/397	Ալֆա-Ամիլազա 200 թեսթ	200200	200200	200200	200200	200200	200200	200200	200200	200200
15	33691420/398	Հիմնային ֆոսֆատազա 200 թեսթ	62120	62120	62120	62120	62120	62120	62120	62120	62120
16	33691420/388	Խոլեսթերոլ 400 թեսթ	118800	118800	118800	118800	118800	118800	118800	118800	118800
17	33691420/389	Գլյուկոզիդացված հեմոգլոբին 200 թեսթ	541600	541600	541600	541600	541600	541600	541600	541600	541600
18	33691420/390	C -Ռեակտիվ սպիտակուց 200 թեսթ	396000	396000	396000	396000	396000	396000	396000	396000	396000
19	33691420/391	Cleaner, basic 4 x 21 ml (NAOH-D) cobas c111 համար	70950	70950	70950	70950	70950	70950	70950	70950	70950
20	33691420/392	Տրիյոդթիրոնին T3 200 թեսթ	59840	59840	59840	59840	59840	59840	59840	59840	59840
21	33691420/395	Թիրոքսին T4 200թեսթ	59840	59840	59840	59840	59840	59840	59840	59840	59840
22	33691162/81	Combur- 10 UX կամ համարժեք Թեսթ	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
23	33691420/393	Հեպատիտ B HBeAg 100 թեսթ	131520	131520	131520	131520	131520	131520	131520	131520	131520

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Վճարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ.:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ

Տնօրեն

Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-9/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-9/1-1 պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն